ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ժամանակակից էկումենիկ շարժումը բնութագրվում է աստվածաբանական-միջեկեղեցական երկխոսությունների բավական լայն և ընդգրկուն շրջագծով: Բացի Եկեղեցիների համաշխարհային խորհրդի (ԵՀԽ) շրջանակներից ներս շարունակվող և զարգացող երկխոսություններից՝ եկեղեցիներն ու եկեղեցական ընտանիքներն ակտիվորեն ներգրավված են տեղական-տարածաշրջանային, աստվածաբանական երկխոսություններում: Եվ բնականաբար, իբրև արդյունք միջեկեղեցական հարաբերությունների այս ծավալման ու զարգացման՝ ստեղծվում են միջեկեղեցական-աստվածաբանական նորանոր փաստաթղթեր, հուշագրեր, վերլուծություններ, որոնք իրենց հերթին նպաստում են ժամանակակից աստվածաբանության նոր որակի՝ էկումենիկ աստվածաբանության զարգացմանը:

Ընդհանուր գծերի մեջ դիտարկելով՝ կարող ենք, թերևս, նշել, որ արդի աստվածաբանության հիմնական ուղեգծերից մեկը եկեղեցաբանությունն է: Հիսուս Քրիստոսի հիմնած մեկ և ընդհանրական Եկեղեցու առկա բաժանյալ վիճակն այսօր գրեթե բոլոր եկեղեցիների ուշադրության կենտրոնում է: Փոխառելով Տերտուղիանոսի պատկերավոր միտքը՝ քրիստոնյա եկեղեցիներն այսօր փորձում են ի մի բերել Քրիստոսի անկար պատմուճանի բաժանված, կտոր-կտոր եղած մասերը. պատմուճան, որ, ըստ էության, ենթակա չէ բաժանման, բայց որի տարբեր մասերն զգում և գործում են իբրև միևնույն պատմուճանի անկախ հատվածներ...

Էկումենիկ աշխարհում այս իմաստով կատարվող և կատարվելիք առաջին քայլերն են վերստեղծել ընդհանրական աստվածաբանական այն միտքը, որն առկա էր տիեզերական Եկեղեցում նախքան առաջին, ամե-

նամեծ բաժանումը՝ 451 թ. Քաղկեդոնի ժողովը: Սակայն այս վերստեղծումը չի կարող իրականացվել ի հաշիվ արդեն ձևավորված ու դարավոր ավանդույթներ ունեցող տեղական եկեղեցական աստվածաբանական մտածողության: Հետևաբար, անհրաժեշտ է մի նոր ոսկե միջին (consensus), մտածողության նոր ձև, որը միաժամանակ կկարողանա ներառել, ընդգրկել վերոնշյալ տեղական եկեղեցիների աստվածաբանական առանձնահատկություններն ու գծերը:

Ասվածը վերաբերում է նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, որն արդեն կեսդարյա իր էկումենիկ գործուն մասնակցությամբ զգալի ներդրում ունի արդի միջեկեղեցական հարաբերությունների ամրապնդման ու զարգացման գործում:

Ի բաց առյալ էկումենիկ աշխարհում Հայոց եկեղեցու բազմաթիվ ներկայացուցիչների բազմակողմանի մասնակցությունն ու գործունեությունը՝ անհրաժեշտ ենք համարում ընդգծել մի կարևոր հանգամանք: Էկումենիկ աշխարհում հաղորդակցման և աստվածաբանելու հիմնական լեզուն անգլերենն է, որով ստեղծվել և շարունակում են ստեղծվել էկումենիզմի պատմությանը, աստվածաբանական ու բարոյաբանական, բնապահպանական և այլ հիմնահարցերի նվիրված փաստաթղթեր, մենագրություններ ու ժողովածուներ: Այնուամենայնիվ, հայ իրականության մեջ այս՝ արդեն պատկառելի ժառանգությունը յուրացնելու, մտածողության և բառագանձի հայացման առումով դրանց հայերեն տարբերակների առկայությունը դառնում է խիստ անհրաժեշտ:

Սրանով է պայմանավորված «Էջմիածին» հանդեսի ներկա համարում միջեկեղեցական կարևոր երկու փաստաթղթերի հայերեն թարգմանության հրատարակումը՝ անհրաժեշտ ծանոթագրություններով և դիտողություններով: Լիահույս ենք, որ արդի հայ աստվածաբանական կրթական բարձրագույն հաստատությունների և առանձին մասնագետների համար այն լավագույն առիթն է՝ ևս մեկ անգամ անդրադառնալու վերը նշված հրամայականին՝ հայացնել արդի աստվածաբանական-միջեկեղեցական մտածողության ձևերն ու մեթոդները, և ըստ այդմ՝ ունենալ հայերեն բառագանձի արտահայտումներով պայմանավորված և կատարելապես հայեցի հնչող եզրեր: Այս իմաստով մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում «Էջմիածին» հանդեսի խմբագրությանը՝ սույն համարի մի ստվար մաս էկումենիկ հարաբերություններին նվիրելու համար:

Շ. Ծ. ՎՐԴ.